ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԱՇՈՏ ՎԱՉԱԳԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 «ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հետազոտության թեմայի արդիականությունը

Ցանկացած ժողովրդավարական պետության հանրային կառավարման արդյունավետությունը մեծապես պայմանավորվում է իշխանության թևերի միջև լիազորությունների օպտիմալ պատվիրակմամբ և գործառույթների այնպիսի տարանջատմամբ, որը հնարավորություն է ընձեռում ապահովել դրանց միջև հակակշիռների օպտիմալ համադրություն:

Հայաստանի տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման ու գործունեության վերլուծությունը վկայում է, որ մեր հանրապետությունում տեղական ինքնակառավարումը դեռևս գտնվում է բավական ցածր մակարդակի վրա, ինչի մասին են վկայում համայնքների կառավարման գործընթացին տեղի բնակչության ցածր ներգրավվածությունը, համայնքների սեփական ֆինանսական ռեսուրսների անբավարարությունը, տեղական բյուջեների ձևավորման ինքնուրույնության ցածր մակարդակը, բնակչությանը մատուցվող ծառայությունների ոչ պատշաճ որակը և այլն:

Հաշվի առնելով վերոգրյալը, ներկայումս մեր հանրապետությունում հանրային կառավարման համակարգի ապակենտրոնացումը հանդիսանում է սոցիալ-տնտեսական բարեփոխումների կարևոր ուղղություններից մեկը, ինչի արդյունքում կձևավորվեն կառավարման համակարգի ժողովրդավարացման և թափանցիկության մակարդակի բարձրացման, ինչպես նաև արդյունավետության ապահովման նոր նախադրյալներ: Այս առումով, անհրաժեշտ է բացահայտել Հայաստանում տեղական

ինքնակառավարման համակարգի զարգացման ոլորտում առկա հիմնախնդիրները և մշակել վերջինիս զարգացման հիմնական ուղղությունները, ինչով էլ պայմանավորված է հետազոտության թեմայի *արդիականությունը*:

<u>Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը</u>

Կառուցվածքային առումով հետազոտությունն իրականացված է ատենախոսությունում բարձրացված հիմնահարցերի և դրանց հետ կապված խնդիրների լուծման տրամաբանական հաջորդականության ապահովման սկզբունքով: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության առարկան և օբյեկտը, հետազոտության նպատակը և խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին <<Տեղական ինքնակառավարման համակարգի ինստիտուցիոնալ հիմքերը և գործունեության առանձնահատկությունները>> գլխում ներկայացվել են պետական կառավարման ապակենտրոնացման էությունը և առանձնահատկությունները, տեղական ինքնակառավարման համակարգի գործառույթները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կարգավորման իրավական հիմքերը:

Ատենախոսության երկրորդ՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման և գործունեության առանձնահատկությունները ՀՀ-ում և արտերկրում» գլխում ներկայացվել են ՏԻՄ-երի լիազորությունների շրջանակը, կարգավորման մեխանիզմները, տեղական ինքնակառավարման ոլորտում պետական քաղաքականության ուղղությունները և վերջինիս առանձնահատկությունները

Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման և կառավարման միջազգային փորձը:

Ատենախոսության երրորդ՝ «ՏԻՄ-երի գործունեության և կառավարման զարգացման ուղիները ՀՀ-ում» գլխում հետազոտվել են Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման համակարգի կառավարման ոլորտում, ինչպես նաև համայնքների խոշորացման գործընթացում առկա հիմնախնդիրները, ներկայացվել են տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման ուղղությունները:

Եզրակացություններ բաժնում արտացոլվել են ատենախոսությունում կատարված հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումները:

<u>Հետազոտության գիտական նորույթը</u>

Ատենախոսության գիտական արդյունքները պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ: Դրանք հետևյալն են.

- Մշակվել և համակարգված կերպով ձևակերպվել են Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգի զարգացմանը միտված բարեփոխումների հիմնական ուղղությունները:
- Հիմնավորվել է տեղական ինքնակառավարման երկմակարդակ համակարգի անցման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը Հայաստանի Հանրապետությունում:
- Բացահայտվել են ՏԻՄ-երի զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոնները և առաջարկվել են դրանց վերացմանն ուղղված կոնկրետ միջոցառումներ՝ միտված համայնքների ֆինասական ինքնուրույնության ապահովմանը, համայնքային բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետության բարձրացմանը, փոխատվական կապիտալի

շուկայում համայնքների գործունեության զարգացմանն ու խթանմանը, ինչպես նաև համայնքային ֆինանսների կառավարման բարելավմանը:

- Առաջարկվել են ՏԻՄ-երի կառավարման արդյունավետության բարձրացման, դրանց գործունեության զարգացման, ՏԻՄ-երի գործունեության թափանցիկության ու հաշվետվողականության բարձրացման, տեղական ինքնակառավարման համակարգում քաղաքացիների մասնակցության խթանման և տեղեկատվական հասարակության ձևավորման ուղղությամբ կոնկրետ միջոցառումներ:
- Հիմնավորվել է Հայաստանում ապակենտրոնացման ցածր մակարդակը և դրա հիման վրա առաջարկվել են այն հիմնական ուղղությունները և գործողությունները, որոնք ենթադրում են որոշ խումբ լիազորությունների փոխանցում հանրապետական և տարածքային կառավարման մարմիններից ՏԻՄ-երին:

Հետազոտության ընթացքում հեղինակն օգտվել է հարուստ գրականությունից՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն գիտական աղբյուրներից, վիճակագրական տվյալներից, համացանցային ռեսուրսներից և ոլորտը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերից:

<u>Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ</u>

Չնայած իր դրական արժանիքներին՝ ատենախոսությունը զերծ չէ որոշ թերություններից: Դրանք հետևյալներն են.

1) Ատենախոսությունն ավելի շահեկան դիրքում կհայտնվեր, եթե դրանում առավել մանրամասն ներկայացվեր լիազորությունների ապակենտրոնացման առկա ցածր մակարդակի առաջացման պատճառները և գործոնները:

2) Ատենախոսությունն ավելի կշահեր, եթե հեղինակը վարչատարածքային բարեփոխումների գործընթացին անդրադառնալիս, ի թիվս համայնքների

միավորման գործընթացի, առավել հիմնավորված ներկայացնել միջհամայնքային համագործակցության ներդրման արդյունավետությունը:

3) Հետազոտությունն առավել հիմնավորված կլիներ, եթե հեղինակը առավել մանրամասն և հիմնավորված ներկայացներ տարածքային կառավարման մարմինների և դրանց լիազորությունների շրջանակների բարեփոխման մոդելը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության արժանիքները և ստացված արդյունքները:

Աշոտ Վաչագանի Ավետիսյանի կատարած հետազոտությունն ինքնուրույն և ամբողջական գիտական բարձր մակարդակով կատարված աշխատանք է: Ատենախոսությունում օգտագործված տեսական մոտեցումները և գործնական առաջարկությունները գիտականորեն հիմնավորված են և ընդունելի:

Լինելով ինքնուրույն, ամբողջական և արժեքավոր հետազոտություն, ատենախոսությունը հագեցած է կիրառական նշանակություն ունեցող նյութերով: Աշոտ Ավետիսյանի ատենախությունում ներկայացված առաջարկությունները կիրառելու դեպքում դրանք կարող են ակնհայտ դրական ազդեցություն թողնել Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման վրա:

Հետազոտության հիմնական արդյունքները արտացոլված են ատենախոսության սեղմագրում և հեղինակի կողմից հրատարակված յոթ գիտական հոդվածներում: Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են հստակ և

ընկալելի ոճով, դրանց ձևավորումը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին:

Աշոտ Վաչագանի Ավետիսյանի «Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը Ը.00.02-«Տնտեսության, նրա որորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս
Հայաստանի տարածքային
զարգացման հիմնադրամի տնօրեն
տնտեսագիտության թեկնածու

Ա. Շ. Սողոմոնյան